

Բնական (ոչ-աւանդական) բարոյական սկզբունքներու հիմքը նոյնինքն մարդկային բնութիւնն է, իր բնականութեամբ եւ ինքնավարութեամբ (ազատութեամբ): 18-րդ եւ 19-րդ դարերու ընթացքին, բարոյագէտ-փիլիսոփաներու կողմէ մշակուած են բարոյագիտութեան հիմնաւորման զանազան ծրագիրներ, ինչպէս է պարագան՝ սկոտլանդացի փիլիսոփայ **Դ. Հյումի** մօտ եւ գերման փիլիսոփաներ **Ի. Կանտի** կամ **Ա. Շոպենհաուերի** մօտ, զորս պէտք է որոշ չափով մանրամասնել:

1. Դ. Հյում

Հյում, վարմունք մը կամ վարուելակերպ մը *լաւ ու բարի* կը նկատէր, երբ ընկերութեան մը մէջ, մարդիկ նախապատուութիւն տային այդ վարմունքին: Այլ խօսքով, մարդիկ իրենց հաւանութիւնը կամ համաձայնութիւնը յայտնէին եւ նախապատուութեամբ ընդունէին այդ վարմունքը: Նոյն ձեւով, վարմունք մը (կամ վարուելակերպ մը) *վատ ու չար* կը նկատէր, երբ մարդիկ կշտամ-բէին ու մեղադրէին զայն եւ փոխանակ ընդունելու՝ մերժէին զայն:

Քննադատութիւն.-

Հյումի բարոյագիտութեան այս հիմնաւորումը սակայն վիճելի ու քննադատելի է եւ նոյնիսկ կարելի է զայն բարոյագիտութեան մարզէն հեռացնել, հետեւեալ երկու պատճառներով.-

- **Առաջին**՝ անոր համար, որ այս հիմնաւորման որպէս հիմք կը ծառայէ այն գաղափարը, որ մարդոց մօտ բարոյական գիտակցութիւնը ընդհանուր է (նմանութեան իմաստով) եւ բոլոր մարդիկ նոյն ձեւով կը գիտակցին: Այլ խօսքով, մարդոց բարոյական դատողութիւնը ընդհանուր է եւ բոլորը նոյն ձեւով կը դատեն: Գաղափար մը, որ իրականութեան հետ խոտոր կը համեմատի:
- **Երկրորդ**՝ անոր համար, որ այս հիմնաւորման տրամաբանութիւնը խախուտ է: Տրամաբանական ձեւը հետեւեալն է.- քանի որ վարմունք մը *լաւ ու բարի* է, ան կը դառնայ մարդոց կողմէ՝ հաւանելի եւ ընդունելի ... եւ ոչ թէ հակառակը, այսինքն՝ այդ վարմունքը կը դառնայ՝ *լաւ ու բարի*, որով-հետեւ մարդիկ հաւանած ու ընդունած են զայն:

2. Ի. Կանտ

Կանտ եւս, Հյումի հետ համակարծիք է, որ մարդոց մօտ միայն մէկ բարոյական գիտակցութիւն կայ: Մինչ Կանտ տարբեր ձեւով կը հասկնայ ու կը հիմնաւորէ այս գաղափարը, Հյում երբեք չի յիշեր որեւէ հիմնաւորում, անիկա ըլլայ բացարձակ կամ յարաբերական:

Կանտ, բարոյագիտութիւնը կը հիմնէ *անպայմանական հրամայականին* (Categorical Imperative) վրայ. այլ խօսքով՝ մարդուն պարտաւորութիւնը կը ներկայանայ, գործնական բացարձակ հրամայականով մը, առանց որեւէ նախապայմանի: